ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ.

Խմբագրութիւն Արարատ ամսագրոյ.

Որովհետև քաջայոյս եմ, թէ Խմբագրութիւնդ սիրով կընկալնու ի ծոց իւրի լուր ազգայնոց կարգալու այն ամենայն տեղեկութիւնքն, որոնք կհայտին մտաւոր և բարոյական յառաջադիմութեան նպատակին, որոնցից օգտաւէտութեան բարերար արդիւնք կծնանին և գարնանաբեր զեփիւռի կարևոր յոյս կպարուներակեն իրենց մէջ բանականութիւնը տգիտութեան թանձր սառոյցներից և ողբալի կորստեան խորխորատներից ազատելու նկատմամբ, ուստի և կփութամ ահա հաղորդելու սիրելի ընթերցողաց հետևեալ տեղեկութիւնքն տեղւոյս օրիորդաց դպրոցի վերայ. Այս դպրոցը իւր բացման օրից շնորհիւ Բարեշնորհ Ս. Հօր և ջանիւք Հոգաբարձութեան իւր մանկական փափուկ ոտքերն ուսման մէջ յառաջ կիջոխադրէ, կուսանին այն տեղ այժմոյս վախճանից աւելի Հայ աղջկունք, որոնցից տասներկուքի հոգը՝ իրրև որդեգրաց իւրոց՝ ամենայն թէ ուսումնական և թէ անձնական հանգամանաց հայեցմամբ անմահանուն Բարերար իշխանն տնօրինել է կանխապէս, իսկ մնացեալներն թոշակաւոր են, որոց և իւրաքանչիւրի ամենայն մի տրէթական վարձն՝ նպատակով նոցա ծնողաց նիւթական կարողութեան 8—920 ռուբլի է նշանակուած. Դասախօսութեան առարկայքն են Հայոց, Թուրքաց և Գերմանացւոց լեզուք, այդ լեզուաց վայելչագրութիւնքն, Թուաբանութիւն և ձեռագործութիւն. Սոյն դպրոցի բացման ստորագրութեան մէջ յիշած եմ, թէ խօսեցան ճառեր, ուստի և ահա պատիւ ունիմ առաջարկել Խմբագրութեանդ Մեծապարգոյ Պ. Բէկ-Նազարեանցի և Տիկին Զարուհի Պիւլումեանցի խօսածները, և խնդրել պատուական Արարատայ արդիւնաշահ էջերու մէջ տեղաւորելու զայնս ի լուր սիրելի ազգայնոց, զի զոքա արտաբերուած են այնպիսի նշանաւոր վայրկենից մէջ, որոնք՝ քանի ներկայն ապագայի շարունակութիւն կկազմէ, և այն տեղ խորհրդաւոր ընթացքներ փոխադրելու բարի և օգտաւէտ պայմաններ իւրեան առաջնորդ կընտրէ՝ անմոռաց պիտի մնան պատմութեան էջերուց և զգայուն Հայ հոգւոց մէջ.

Յովհաննէս Մ—ղեղեանց

Ի 16-ն Ապրիլի 1871 ամի

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ.

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ ՀԱՅՐ

ԵՒ ՅԱՐԳՈՅՑԱՊԱՏԻՒ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Առաջին անգամն է, որ կը վստահանամ մի պրոպիսի նուիրական հանդիսի մէջ սրտիս ցանկութիւնները յայտնելու. Երկու են այս վստահութեանս պատճառը. մին՝ մեր Արժանապատիւ Յարգելի Հասարակութեանէդ՝ մի քանի րոպէ ժամանակ շնորհել, սրտիս ցանկութիւնները երկու խօսքով բացատրելու. Օրիորդաց Դպրոց անունը, մեծապատիւ հանդիսականք, առաջին անգամը չէ, որ կը լսէք, բայց ներեցէք համարձակութեանս, եթէ կ'ասեմ, առաջին անգամն է, որ կը տեսնէք Աղէքսանդրապոլու Հայ հասարակութեանս մէջ, այս մեծախորհուրդ մտաւոր գործարանը, այո՛ կարող էի ասել, երբէ՛ն-ի՛ն հնէ՛ օրիորդական դպրոցը. Որովհետև դիւաւորն այն չէ, որ մի գործ շուտով սկսենք, այլ այն է գլխաւոր բանը, որ ճշմարիտ հիմունքների վերայ հիմնելով սկսենք, ուստի կցանկայի, որ այս դպրոցը հիմնուէր և ընթանար այնպիսի ճշմարտութիւններով, զորս մեր դարը կը պահանջէ Քրիստոնէական, բնական և ընդհանրապէս, իրական կեանքի օրինաւոր պահանջմունքներով զարգացած և դաստիարակուած մայրեր. Այս դպրոցը ընտանեաց հետ սերտ պարմաններով կապուելով, պիտի արդարացնէ վերոյիշեալ Աստուածային, բնական և կենսական պահանջները. Այս դպրոցը իւր ծոցը կրթուող մտաղ օրիորդներու փափուկ սրտերը և դիւրաթեք մտքերը պիտի զարգացնէ, մեր սուրբ Հարց արիւնով պաշտպանած ուղղափառ եկեղեցու դաւանութիւններովը, մայրենի լեզուի միջոցաւ. Այս դպրոցը պիտի ծանօթացնէ մեր օրիորդներին իրենց պապերու բնակած երկրի հետ, նոցա անցեալ արարքներու հետ, իրենց տատերու անմոռանալի և յիշատակութեան արժանի վարք ու բարքերու հետ, ընտանեկան և ամուսնական պարտականութիւններու հետ. որովհետև մեր անցեալը պիտի լինի մեր ներկայի հիմը. Այս դպրոցը պէտք է մեր օրիորդներուն ներկայ դարուս պահանջմանցը համեմատ, հասկացնէ, թէ ի՞նչ է ամուսնութիւնը, ի՞նչ է մայրութիւնը, ինչ է ընտանիքը, և թէ սոքա ի՞նչ պարտականութիւններ ունին կատարելու. Այս ասածներէն կհետևի, որ այս դպրոցի պարտականութիւնն է իւր մէջը կրթուող օրիորդներուն ճանաչացնել Աստուծոյ, մարդկային և բնական անհերքելի օրէնքները.

Այսքանը, մեծապատիւ հանդիսականք, դպրոցիս էական նպատակի համար բաւական համարելով, խնդարհաբար կը խնդրեմ, մի՛ թոյլ տաք ներէք ինձ, խօսքս մի՛ շատ կարևոր կէտի դարձնելու, առանց որոյ դպրոցի բարձր նպատակները չեն կարող երբէք իրագործուիլ. այս կարևոր կէտն է ջորդի գալուստը, որուն անդուլ ակնկալութեամբ մեր բարեպաշտոն հասարակութիւնը կսպասէր. և միւսն է բացումը Օրիորդական Հոգևոր դպրոցիս, Երկայնաբազուկ Արդութեանց Իշխան Ղահրամանի Արժ. Հօր գալուստը շնորհաւորելով, կը մաղթեմ Ամենակալին, որ բարեպաշտոն հասարակութեանս նորին Հայրութենէն յուսացած ակնկալութիւնները իրագործէր.

Վստահութեանս երկրորդ պատճառին դառնալով, խնդարհաբար կը խնդրեմ, Յարգելի Հասարակութենէդ՝ մի քանի րոպէ ժամանակ շնորհել, սրտիս ցանկութիւնները երկու խօսքով բացատրելու. Օրիորդաց Դպրոց անունը, մեծապատիւ հանդիսականք, առաջին անգամը չէ, որ կը լսէք, բայց ներեցէք համարձակութեանս, եթէ կ'ասեմ, առաջին անգամն է, որ կը տեսնէք Աղէքսանդրապոլու Հայ հասարակութեանս մէջ, այս մեծախորհուրդ մտաւոր գործարանը, այո՛ կարող էի ասել, երբէ՛ն-ի՛ն հնէ՛ օրիորդական դպրոցը. Որովհետև դիւաւորն այն չէ, որ մի գործ շուտով սկսենք, այլ այն է գլխաւոր բանը, որ ճշմարիտ հիմունքների վերայ հիմնելով սկսենք, ուստի կցանկայի, որ այս դպրոցը հիմնուէր և ընթանար այնպիսի ճշմարտութիւններով, զորս մեր դարը կը պահանջէ Քրիստոնէական, բնական և ընդհանրապէս, իրական կեանքի օրինաւոր պահանջմունքներով զարգացած և դաստիարակուած մայրեր. Այս դպրոցը ընտանեաց հետ սերտ պարմաններով կապուելով, պիտի արդարացնէ վերոյիշեալ Աստուածային, բնական և կենսական պահանջները. Այս դպրոցը իւր ծոցը կրթուող մտաղ օրիորդներու փափուկ սրտերը և դիւրաթեք մտքերը պիտի զարգացնէ, մեր սուրբ Հարց արիւնով պաշտպանած ուղղափառ եկեղեցու դաւանութիւններովը, մայրենի լեզուի միջոցաւ. Այս դպրոցը պիտի ծանօթացնէ մեր օրիորդներին իրենց պապերու բնակած երկրի հետ, նոցա անցեալ արարքներու հետ, իրենց տատերու անմոռանալի և յիշատակութեան արժանի վարք ու բարքերու հետ, ընտանեկան և ամուսնական պարտականութիւններու հետ. որովհետև մեր անցեալը պիտի լինի մեր ներկայի հիմը. Այս դպրոցը պէտք է մեր օրիորդներուն ներկայ դարուս պահանջմանցը համեմատ, հասկացնէ, թէ ի՞նչ է ամուսնութիւնը, ի՞նչ է մայրութիւնը, ինչ է ընտանիքը, և թէ սոքա ի՞նչ պարտականութիւններ ունին կատարելու. Այս ասածներէն կհետևի, որ այս դպրոցի պարտականութիւնն է իւր մէջը կրթուող օրիորդներուն ճանաչացնել Աստուծոյ, մարդկային և բնական անհերքելի օրէնքները.

Այսքանը, մեծապատիւ հանդիսականք, դպրոցիս էական նպատակի համար բաւական համարելով, խնդարհաբար կը խնդրեմ, մի՛ թոյլ տաք ներէք ինձ, խօսքս մի՛ շատ կարևոր կէտի դարձնելու, առանց որոյ դպրոցի բարձր նպատակները չեն կարող երբէք իրագործուիլ. այս կարևոր կէտն է